

Wera: „EINE FÜR VIDLE“. Վերա. «Մէկը զԱՑԵՐԻ ՀԱՄԱՐ»:

—«Ճշմարտութիւնը նման է արեգակին, ասում է Սպինսեր, որ իր ճառագայթներն անխտիր կերպով տարածում է ամենքի վրայց: Եւ շատ ճիշտ է այդ կարծիքը, բայց միայն վերացական կեանկում, միայն տեսականապէս, իսկ եթէ վերցնելու լինենք իրականութիւնը, եթէ վերլուծելու լինենք մարդկանց վարմունքը, այն ժամանակ կը գանք բոլորովին տարբեր եղանակացութեան: Մարդկի միշտ էլ չեղում են այդ ճառագայթների ուղղութիւնը, շատ անգամ մթութեան քողով են ծածկում, որպէսզի հասնեն այս կամ այն նպատակին, որպէսզի արդարացնեն իրանց այս կամ այն վարմունքը: Սպացոյցի համար բաւական է վերցնել երկու սեռների վոխադարձ յարաբերութիւնը: Ի՞նչ է ներկայացնում նա: Կայ արդեօք ընդհանուր արդարութիւն, ընդհանուր ճշմարտութիւն այդ երկուսի համար: —Ո՛չ: Կայ, արդեօք դաստիարակութեան ու կենցաղի նմանութիւն, իրաւունքների ու պահանջների հաւասարութիւն — բոլորովին ոչ: Կայ վերջապէս բարոյական միանման վարմունք, միանման սովորութներ: —Դարձեալ ոչ:

Մենք մի տեսակ արտօնեալ դիրք ենք ստեղծել տղամարդկանց համար և պատնէներ բարձրացրել կանանց առաջ: Մենք քարոզում ենք, թէ մարդ արարածին անհրաժեշտ է անհատական ազատութիւն, անտեսական անկախութիւն, բարձր կրթութիւն և այլ բարիքներ, բայց երբ հարցը գալիս է կանանց մասին, բոլորովին հակառակ ընթացք ենք բռնում՝ այդպիսի վարմունքը գանազան կեղծ ու պատիր պատճառաբանութիւններով արդարացնելով:

Մենք յանուն ընտանեկան երջանկութեան՝ կանացից պահանջում ենք անպայման ողջախորհութիւն, բարոյական անարատութիւն, բայց միևնույն ժամանակ ներողամիտ աչքով ենք նայում, երբ տղամարդիկ մինչեւ ամուսնալը հազար ու մէկ արշածներով են լցնում իրանց կեանքը և դեռ ամուսնութիւնից յետոյ էլ երբեմն շարունակում են այդպիսի ընթացքը:

Այդպիսի անարդարութիւնն ու հակասական վարմունքը վաղուց արդէն մի սոցիալական չարիք է դարձել, որ կեանքի իւրաքանչիւր քայլափոխում արտայայտում է իր կորստաբեր հետեանքները: Ահա այդ չարիքի դէմ է ուղղուած ֆեմինիզմը — կանանց շարժումը, զբա դէմ է բոլորում և գրքոյկիս բովանդակութիւնը:

Սովորական բոլոր չէ դա, այլ մի բուռն հեծեծանք, կա-

նացի սիրող ու անդէն սրտից բղխած մի հեծեծանք: Պայծառ  
գոյներով պատկերացրած խանդավառ սիրտ, ըելինք գծերով  
բնորոշած յուսախար կնոջ հոգեբանութիւն—ահա այն գործօն-  
ները, որոնք այնքան դրաւիչ, այնքան ազդու են դարձրել այդ  
հեծեծող ձայնը, որը մի ամբողջ հոսանք է ստեղծել գերմանա-  
կան աշխարհում:

«Վերիզմ» անունն են տալիս այդ նորաստեղծ հոսանքին,  
որ արձագանք է գտել թէ մամուլի էջերում և թէ հասարակու-  
թեան մէջ: Շատերը բողոքում են Վերայի հեղինակութեան դէմ  
և նրան համարում են ջղացին հիւանդ, նիշէւական հովերից  
աղջուած, բայց շատ շատերն էլ հիացած են նրա համարձակ  
մափերով, կրակու ոճով: Եւ այդպիսով «Մէկը շատերի համար»  
զրբոյկը կարգացրում է մեծ հետաքրքրութեամբ, խօսեցնել է  
տալիս իր մասին: Միայն մի քանի ամսուայ ընթացքում նա  
արդէն 15-երորդ հրատարակութեանն է արժանացել և թարգ-  
մանուած է եւրոպական շատ լեզուներով:

Գաղափարի նորութիւն չը կայ նրա մէջ: Սակայն հեղի-  
նակուհին իր չնորհալի գրչով մօտենում է մարդկային հոգու  
այսպիսի լարերին, այնպէս պայծառ գոյներով է լուսաբանում  
իր հերոսուհու հոգեբանութիւնը, նրա հոգեկան յուզմունքը, որ  
այդ բոլորը ընթերցողին թւում է մի նորութիւն:

Գիրքը գրուած է յիշատակարանի ձևով: Նրա սիզբում  
յիշատակարանի հեղինակուհին—օրիորդ Վերան գիմում է իր  
սրտի ընտրեալին այսպիսի խօսքերով:

Գէորգ!

Ես չեմ կարող քոնը լինել, Ես փորձեցի անցնել այդ ան-  
գունդը, որ բաժանում էր մեզ... բայց իցնորդ Ես անկարող եմ  
զավել եմ գագացունքները: Քո զրկում իմ կեանքը կը լինէր մի  
յաւիտենական կեղծիք... Ահա թէ ինչու Ես հեռանում եմ քե-  
զանից ընդմիշտ, յաւիտեան: Գէնրգ, իմ սէրը զէպի քեզ աւե-  
լի զօրեղ է, քան թէ ապրելու ցանկութիւնը: Ես չեմ կարող  
քեզ տեսնել տանջուելիս: Ես մեր հասարակական կազմակերպու-  
թեան զոհն եմ... ոչ առաջին և ոչ էլ վերջին զոհը: Ես չափա-  
զանց թոյլ եմ՝ այդ հսկայական կոփւը մղելու համար և չափա-  
զանց միայնակ: Բայց կատարիր իմ խոդիրը, Գէնրգ, իմ ամե-  
նավերջին խնդիրը: Կուիր յանուն այն գաղափարի համար, և գա կը  
լինի քո կողմից մի լաւ յիշողութիւն իմ մասին:

Գէորգ! Ուզարկում եմ քեզ յիշատակարանիս վերջին ե-  
րեսները: Նրա միջի իւրաքանչիւր խօսքը իմ հոգու մի մաս-

նիկն է: Կարող ես այդ յիշատակարանը հրատարակել մի որեէ կեղծ անունով:

Եւ եթէ գոնէ մի քանի մարդիկ այդ իմ «սրբութիւն սըրբոցին» մօտենալիս՝ ծաղրով ու արհամարհանքով չը վերաբերուեն դէպի ինձ, այն ժամանակ ես գոհ կը լինեմ...

Մնաս բարով, Գէնրդ:

Աշխատիր միսիթարել իմ խեղճ ծնողներին:

Ուղարկում եմ քեզ իմ վերջին բարել, որ իմ սիրոյ և տան-ջանքների արդիւնքն է կազմում:

Միշտ քեզ հաւատարիմ  
Վերա:

Ահա այդ առաջարան նամակից յետոյ գալիս է բուն բնագիրը, որի մէջ տաղանդաւոր գրչով նկարագրուած են այն հոգեկան տանջանքների շղթան, որ անընդհատ հալումաշ են անում վերային և վերջապէս գերեզման են գլորում նրա մատաղ կեանքը:

Վերան սովորական կրթութիւն ստացած մի օրիորդ էր, բայց չը նայելով այդ հանդամանքին՝ նրա հոգեկան աշխարհը հիմնովին տարբերում էր շրջապատողներից, տիրող կարգերից: Նա թանձր պատնշով էր շրջապատել այդ աշխարհը և ոչ ոքի չէր թողնում նրան մօտենալու: «Ես յածախ անսահման միայնակ եմ զգում ինձ, գրում է նա. և այդ զգացմունքը աւելի սուր կերպարանք է ստանում, երբ ես գտնում եմ օտար ու անտարբեր մարդկանց շրջանում...»

Նա շարունակ դիտում է շրջապատող կեանքը և օրէցօր աւելի ու աւելի յուսահատուում: Նրա միտքը շարունակ գործում է, իսկ այդ գործունէութիւնը շատ յուեեսն հետեանքների է հասցնում: Վերան իր շուրջը տեսնում է կոպիտ անարդարութիւն, կեղծիք ու խարէութիւն: Այդ գիտակցութիւնը ծանր լծի նման ծանրանում է նրա զգին և մի ներքին ձայն միշտ գրում է նրան թօթափել այդ լուծը, բողսք բարձրացնել կեղծիքի, անարդարութեան ու անհաւասարութեան դէմ: Նա տեսնում է հասարակական չարիքներն ու տանջանքները, տեսնում է տնտեսական կարիքներից ընկճուած, ստորացած մարդկանց և բուռն կարեկցութիւն զգում:

Բայց միայն պլատոնական կարեկցութիւնը բաւականութիւն չէ տալիս նրան: Նրա զգայուն սիրտը աւելի հեռուն է ձգտում: Եւ այդ ձգտումը գառնացնում է նրա կեանքը, խաւարեցնում է նրա օրերը:

Ահա այդպիսի դառնութեան ու խաւարի միջից յանկարծ փայլում է մի լուսաւոր աստղ՝ Սէրն է այդ աստղը, Վերան սիրահարւում է, և այդ նոր զգացմունքը յանկարծակի լցնում է նրա կեանքի դաստիրկութիւնը Նա պատրաստ է ամեն ինչ անել, ամեն ինչ զոնել այդ զգացմունքի համար; Բայց մերթընդմերթ նրա հպարտ հոգու խորքից գուրս է ցայտում ինքնուրոյնութեան, անհատական ազատութեան կայծը, որը մաքառել է աշխատում սիրային զգացմունքի դէմ: Սակայն սէրը յաղթում է. Վերան իր անհատական հպարտութեան բարձունքից կամաց կամաց ներքն է իջնում զիջումների սանդուղքով:

Զը նայելով դրան՝ ներքին խուլ պայքարը չարունակում է, Վերան կարողացել է իր յիշատակարանի մէջ ճշգրիտ գծերով բնորոշել նրա նրբութիւնները, նրա ելեէջները: Կարողացել է պատկերացնել կանացի հոգու այն հնաւանդ յատկանից, որով նա միշտ կարծես մի տեսակնախանձ է զգում դէպի տղամարդը, մի տեսակ զայրոյթ դէպի նրա արտօնեալ դրութիւնը:

Կան կանաքը, որոնք շարունակ մի տեսակ ձգտում են զգում՝ նոյնիսկ սիրած տղամարդու դէմ մրցելու, երբեմն նրա ցանկութեան հակառակ գնալու: Վերան այդ տեսակ կանանցից է: Նա անսահման սիրում է Գէորգին, բայց միենոյն ժամանակ մերթընդմերթ մի տեսակ ներքին չարութիւն է զգում նրա դէմ: չարութիւն, որ նա իրրև տղամարդ աշխատում է և ապագայում աւելի ևս աշխատելու է օգտուել իր սեսի արտօնութիւններից:

Վերան վախինում է կորցնել իր երջանկութիւնը—սիրոյ զգացմունքի վրայ հիմնուած երջանկութիւնը: Եւ գժբաղգաբար արդարանում է նրա նախազգացումը: Սիրոյ գարնան քաղցր բորբէին յանկարծ բացում է նրա առաջ սիրած մարդու—Գէորգի անցեալը և հիմնայատակ անում վարդագոյն երազները, անրջային ամրոցները:

Նա իմանում է, որ Գէորգն էլ բոլոր միւս տղամարդկանց նման «սիրային» արկածներ է ունեցել, «սերա կապեր» է հաստատած եղել ուրիշ կանանց հետ, չեղուել է ողջախոնութեան ճանապարհից: Նրա վրայ զգուելի տպաւորութիւն է թողել մանաւանդ այն հանգամանքը, որ Գէորգը բոլորովին անվրդով կերպով, առանց ամաչելու կամ խղճահարուելու պատմում է իր դատապարտելի անցեալը:

Այդ խոստովանութիւնը մի խոր անդունդ է բաց անում սիրող սրտերի մէջ: Սեանում են Վերայի օրերը. նա հալումաշ է լինում ներքին տանջանքից:

«Ես չեմ կարծում, զրում է նա իր յիշատակարանում,

թէ մաքուր ու ազնիւ մարդը կարող է սեռական պահանջների ազգեցութեան տակ իշնել և լնկնել մի այդպիսի գարշահոտ ճահճի մէջ, թէ կարող է պղծել իր մաքրութիւնը, իր պատիւը՝ ստոր ու բոպէական կապերով, թէ նա այդպիսի անցեալից յետոյ առանց խղճահարուելու կը վերցնէ մաքուր ու անբիժ կին...

Միթէ իսկապէս տղամարդկանց սեռական պատիւը տարբերում է կանանց պատից... Միթէ մի կազմակերպուած խարէութիւն չէ ասել, թէ անհրաժեշտ է մատաղ հասակում յաղուրդ տալ սեռական կրքերին... Միթէ պահեցողութիւնն ու ողջախոնութիւնը կարող են այնքան սարսափելի, կեանք ու երջանկութիւն քայրայող հիւանդութիւններ առաջացնել, որքան ողջախոնութիւնն ու անառակութիւնը, Ոչ երբէք...

Տղամարդը իր ընտրած օրիորդից պահանջում է ոչ միայն ողջախոնութիւն, այլև բարոյական մաքուր համբաւ եւ միանգամայն հիմնաւոր է այդպիսի պահանջը: Բայց միթէ կինը պարտաւոր է իր ամուսնուն բաժանել անառակ կանանց հետ... Նա պարտաւոր է կրել մայրական ծանր տանշանքները այն դառն գիտակցութեամբ, թէ նրա զաւակների հայրը վաճառուող գրկախառնութիւնների մէջ է մաշել երիտասարդական ոյժերը, թէ նա անասնական զգայնութեամբ պղծել է իր մաքրութիւնը՝ առանց վախենալու զգուելի հիւանդութիւններից...

Եւ ահա այդ բոլորից յետոյ կանայք ոտքի են կանգնում և միատեսակ իրաւունքներ պահանջում պետութեան ու կեանքի մէջ, միատեսակ օրէնքներ, միատեսակ զբաղմունքները...

Սյդպիսի մոքերը հանգիստ չեն տալիս Վերային: Նա գիշերցերեկ հալումազ է լինում՝ աշխատելով լուծել «լինել, չը լինելու» հարցը: Մի ուրիշ, սովորական կին մոռացութեան կը տար այդ ամենը, իր ներկայի ու ապագայի դրաւիչ հեռանկարով կը ծածկէր անցեալի սև բծերը: Բայց Վերան այդ տեսակ կանանցից չէ: Նա անկարող է կեղծել իր զգացմունքները, «անկարող է համբոյրներ ստանալ սիրած մարդուց և ներքին զըզուանք զգալ՝ մտածելով, որ նոյնանման համբոյրներ նա դրոշմել է և ուրիշ—անառակ կանանց շրթունքներին»...

—Գէնրգ, հարցնում է նա իր նշանածից, արդեօք դու կարող էիր ամուսնանալ մի անառակ կնոջ հետ...

Գէորգը հասկանում է այդ ակնարկի իմաստը և ամօթանքից ու խղճի խայթոցից լուսւմ...

—Իսկ ես, շարունակում է Վերան, այդ բոպէին մտածում էի, թէ բոլոր տղամարդիկ ոչնչով լաւ չեն այդպիսի անառակ կանանցից...

Սյդ դառն գիտակցութիւնը օրէցօր սաստկանում է և յու-

սախար օրիորդի համար կորստեան վիճ պատրաստում։ Նա առաջուայ չափ սիրում է Գէորգին, բայց չի կարողանում մոռանալ արատաւոր անցեալը, ուստի վճռում է գետ չը պսակուած բաժանուել նրանից, բաժանուել յաւիտեան։ Բայց այդ գետ բոլոր չէ։ Նա լաւ հասկացել է ընտանեկան թշուառութիւնների պատճառը, ըմբռնել է չարիքի շարժառիթը, որի արմատները թագնուած են հասարակական բարոյականութեան մէջ, երկու սեռերի անհաւասարութեան, իրաւունքերի, պահանջների, դաստիարակութեան ու կենցաղի տարրերութեան մէջ։ Նա լաւդիտէ, որ միայն այդ վասակար կարգերն ու սովորոյթները արմատախիլ անելով կարելի է չարիքը վերացնել, անթիւ-անհամար կանանց հեծեծանքին վերջ տալ, ընտանեկան շատ գժուութիւնների առաջն առնել։ Եւ ահա նա որոշում է գոհել «Ճիկեանքը շատերի համար», որպէսզի դրանով մտածել ստիպէ իր սեռակիցներին, ամբողջ հասարակութեանը...

«Ես քաջութեամբ և անտարբերութեամբ եմ նայում իմ մահուան վրայ, գրում է Վերան իր յիշատակարանի վերջին երեսում. ոչ մի բան ինձ չէ վախեցնում, ես արդէն այրել եմ իմ յետեից բոլոր կամուրջները։ Վերադարձ չը կայ... Յոյսերից ու անուրջներից զրկուած կեանքը զլորում է ինձ դէպիներքն, դէպի կորստեան անդունդը...»

Սյն մարգիկ, որոնք իրանց առօրեայ կոպիտ կեանքում միշտ ծիծաղում էին իմ գաղափարների վրայ՝ անիրագործելի չափազանցութիւններ համարելով նրանց, այն տղամարդիկ, ուրոնք ծիծաղում էին ինձ վրայ, թէ և հոգու խորքում խոստովանում էին իրանց յանցանքը—այդ բոլորն էլ գոնէ մի բոպէ կրդագարեն ծաղրելուց, եթէ իմանան...

Եւ ամեն մի նրբամիտ ու զգայուն կին, կարդալով իմ այս յիշատակարանը՝ կը մտածէ ինձ հետ միասին, կը զգայ նոյն տանշանքները, նոյն դառնութիւնները...»

Եւ եթէ ինձ աջողուի գոնէ մի փոքրիկ քար դնել ապագայի ողջախոհութեան և մաքրութեան հրաշալի շինուածքի մէջ, այն ժամանակ արժէ դրա համար կեանք գոհել»...

Եւ նա իսկապէս զոհում է իր մատաղ կեանքը:

Դրանով էլ վերջանում է գրքոյի բովանդակութիւնը, որի ամենազիստաւոր արժանիքը ոչ թէ հիմնական գաղափարն է, ոչ թէ արծարծած մտքերն են, այլ հոգեբանական նրբութիւնը, որ դժբաղդաբար անկարելի է վերաբաղրել գրուածքը համառօտելիս։

Այս, որ տղամարդն էլ պարտաւոր է ողջախոհ և անարատ լինել մինչեւ ամուսնանալը, ինչպէս և կանայք—այդ գա-

զավարը շատ անգամ է կրկնուել, շատ անգամ է գրուել նրա  
մասին: Բայց նա երբէք այնպիսի կարճ, կտրուկ և միենոյն  
ժամանակ չափազանց աղդաւ արտայալառութիւն չէ ստացել,  
ինչպէս Վերայի «իշատակարանում»: Հէնց դրա մէջն է թագ-  
նուած «Մէկը շատերի համար» գրքոյկի արտակարգ աջողու-  
թեան գաղտնիքը:

Ե. ԹՈՓՉԵՍՆ